հուսատու պրակտիկանտը յերեք ամ-
սվա ընթացքում կծանոթանա կոռպե-
րատիվ աշխատանքի ընդհանուր խըն-
դիրներին և կառուցվածքին. սկսելով
ուեզիստրատուրայից, այդ ժամանակի
ընթացքում նա աստիճանաբար առաջ
կերթա և կհամնի մինչև վարչության
բաժիններում աշխատելուն։ Առաջին
յերեք ամիսն անցնելուց հետո պրակ-
տիկանտը պիտի ընտրի աշխատանքի
վորոշ ճյուղ (հրահանգիչ, գործակա-

տար, պահեստային աշխատող, հաշվե-
տար) և այդ ճյուղում պետք ե մաս-
նագիտանա։ Կոռպերատիվ կազմակեր-
պության կազմ-բաժինն աչքաթող չպի-
տի անի պրակտիկանտի աշխատանքը.
Նա պիտի ամենայն որ դեկավարի այն,
առանձնապես նկատի առնելով ընկե-
րոջ ցուցադրած հետաքրքրությունն
ու ընդունակություններն աշխատանքի
առանձին ասպարեզներում։ Պրակտի-
կանտների նախապատրաստությունն
իհարկե, պիտի համաձայնեցնել տվյալ
շրջանում պետք յեղած աշխատավորնե-
րի պահանջին։ Այսաեղ պետք ե կոնկրետ
կերպով քննել ունախատեսել, թե վոր-
տեղ և ինչ աշխատանքի համար մարդ-
կանց կարիք կա։ Իսկ ընդհանրապես
պրակտիկանտության համար կարելի
յե հանձնաբարել յերկու ուղղություն՝
նախապատրաստություն պահեստի աշ-
խատողների և մեկ ել՝ հրահանգիչների։
Առանձնապես պիտի ուշադրություն
դարձնել պահեստների աշխատավորներ

նախապատրաստելու վրա։ Թե ինչ չափով պրակտիկանոր աշխատանքի ծրագիրը կարող է իրագործվել կարճ ժամանակի ընթացքում, և թե ինչ չափով այդ ժամանակամիջոցում կարելի կը լինի նախապատրաստել լիովին վորակյալ աշխատավոր, այդ հաշվի առնելը դժվար է. կնշանակի՝ պրակտիկանության համար պիտի ընտրել առավել ընդունակ ընկերների, վորոնք ունենան հասարակական և տնտեսավարական փորձառություն, վորոնք կարողանան արագ կերպով ընտելանալ նոր միջավայրին։

Վարչություններին և վերստուգիչ հանձնաժողովներին կցելը նույնպես եյական միջոց է, վոր ընդունակ և աշխատավորներ նախապատրաստելու։ Այդ միջոցը նամանավանդ հետաքրքիր է կոմյերիտական կազմակերպությունների համար, ինչ չափով վոր այդպիսով կոմյերիտական կազմակերպությունն ավելի սերտ կերպով կլապվի

այս կամ այն կոոպերատիվ կազմակերպության աշխատանքի հետ։ Կցվածների աշխատանքն ընթանալու յե թե այն որգանների աշխատանքներին մասնակցելու ուղղությամբ, վորին կցվածեն, և թե կոոպերատիվ աշխատանքներին գործնականորեն ծանոթանալու իմաստով (սկսած աշակերտի պարտականությունները կատարելուց, և այլն)։ Պիտի ասել, վոր կցումն իր գրական արդյունքները միայն այն ժամանակ կտա, յերբ կցվածների աշխատանքը դրված կլինի վորոշ պլանի, մի կանոնավոր սիստեմի մեջ։ Զպետք է մոռանալ, վոր կցված ընկերը պետք է նախապատրաստվի կոոպերացիային իսկապես պիտանի աշխատավոր դառնալու համար։

ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ
ԶԵՎԵՐԸ ՔԱՂԱՔՈՒՄ.

Կոմյերիտականներն ու յերիտասարդությունը կոոպերացիայի տեսության

հարցերով զբաղվելիս այդ հարցերով
այնքան ել չեն հետաքրքրվում։ Նույնը
պիտի ասել և կոռպերացիայի բոլոր աշ-
խատավորների մասին։ Հաստատ կարե-
լի յե ասել, վոր յեթե հիմա ստուգում
կատարելու լինենք, նույնիսկ կոռպե-
րացիայի յերիտասարդ աշխատավորնե-
րի մեջ, դեռևս չենք խոսում այն յերի-
տասարդության մասին, վորոնք կոռպե-
րացիայի մեջ չեն զբավված, ապա ան-
խուսափելիորեն բաղկավելու յենք 99%/
անզբագիտության փաստին։ Իսկ չե վոր
մենք շատ լավ զիտենք, վոր կոռպերատիվ
աշխատանքի զարգացման համար այդ
բոլորն իմանալը կատարելապես անհրա-
ժեշտ ե։ Սրանից բղխում ե այն, վոր կոռ-
պերացիայում պրակտիկ աշխատանքի
հետ միասին պետք ե ծավալել նաև կոռ-
պերատիվ անզբագիտության վերացման
աշխատանքը կոմյերիտմիության մեջ
ընդհանրապես և կոռպերատիվ աշխա-
տանքների ուղարկվող կոմյերիտական
աշխատավորների մեջ մանավանդ։

Վերևում մենք արդեն հիշեցինք բջիջ-
ների նիստերին զեկուցումներ գնելու
միջոցով կոռպերացիայի խնդիրների հետ
ծանոթացնելու յեղանակներից մեկը։
Բայց զբանով բավականանալ չի կարելի
նախ՝ վորովհետեւ այդպիսի զեկուցումը
շատ հաճախ ձգտում ե արտացոլել մի-
այն տվյալ կոռպերատիվի գործնական
աշխատանքը և յերկրորդ՝ վորովհետեւ
այդ զեկուցումները շատ հաճախ լինում
են մակերեսային և, բնականաբար, կոմ-
յերիտական մասսային լրիվ կերպով
չեն բավարարում, քանի վորոնա այժմս
ավելի խոր զիտելիքներ ե պահանջում,
վորպեսզի կարողանա գործնական փոր-
ձըն ամրացնել այն չափով, վոր համար-
ձակ կերպով կարողանա ըմբռնել նոր
խնդիրները և գծել ապագա աշխատանքի
գործնական ծրագրեր։ Այդպիսի զիտե-
լիքներ տարածողը վորոշ չափով ակում-
բըն ե լինելու, ակումբներում անհրա-
ժեշտ ե կազմակերպել կոռպերացիայի
հատուկ խմբակներ՝ հասակավորներից

և յերիտասարդությունից։ Այդպիսի խմբակների կազմակերպման նախաձեռնությունն իր վրա պետք ե վերցընի Կոռյունիտմիության բջիջը։ Խմբակ կազմակերպելիս մասնակցողների քանակի յետեկից չպիտի ընկնել։ պետք ե գտնել և համախմբել 15-20 հոգուց մի խումբ, վորոնք իսկապես աշխատանքով հետաքրքրվում են, և այդ կորիզի շուրջը պետք ե համախմբել մնացած մասսան։ Խմբակի ծրագրի հիմնական խնդիրն ե լինելու՝ բանվորներին և յերիտասարդությունը լայն կերպով գրավել կոռպերացիայի մեջ և խմբակի անդամներին (կոռպերատիվի անդամներին և չկոռպերացվածներին) ծանոթացնել կոռպերատիվ գրագիտության։ Կոռպերատիվ գրագիտություն ասելով պիտի հասկանալ յուրացումն կոռպերացիայի դորձնական աշխատանքի հիմնական մոռմենտների մասին գոյություն ունեցող տարրական գիտելիքների և հայտնաբերումն Խ. Ս. Հ. Մ.-ի կոռպերատիվ

շինարարության ձևերի՝ ի նկատի առնելով կոռպերացիայի դասակարգագիրն դերն ու սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրները։

Կոռպերատիվ աշխատանքի և սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրների, այսինքն Վ. Ի. Լենինի պատգամներով առաջնորդվող Ռ. Կ.-ի քաղաքականության—շաղկապը անհրաժեշտ ե առանձնապես վառ կերպով ընդգծել՝ կոռպերատիվ աշխատանքի խընդիրների և մեթոդների մասին զրուցելիս։ Այդ ընդգծել և շեշտելն անհրաժեշտ ե մասնավանդ այն պատճառով, վոր ծրագրի հետագա մասերը պետք ե կապել դասակարգագիրն ուղաքարի և պրոլետարական հեղափոխության հետ, աշխատելով ամեն մի առանձին մոմենտում պարզաբանել այն Ռ. Կ.-ի քաղաքականության ընդհանուր ֆոնի վրա։

Բանվորական խմբակի ծրագիրը բաժանվում է հետեւյալ հիմնական մոմենտ-

ներին.—Լենինի պատգամները կոռպերացիայի մասին, կազմակերպումն տեղական կոռպերատիվի տնտեսության, սպառողական ընկերության կանոնադրության հիմունքները, միութենական կոռպերատիվ շինարարություն, կոռպերացիան սոցիալիստական շինարարության մեջ, կոռպերացիան և կոմմունիստական կուսակցությունը, կոռպերացիան և նոր տնտեսական քաղաքականությունը (ՆեՊ) և այլն¹; Այս թեմաները բաժանվում են 22 զրույցների. բացի սրանից, ծրագրի մեջ պիտի մըտցընել 4 կամ 5 զրույց գործնական աշխատանքի կարգով և 3-4 եքսկուրսիա դեպի մոտակա կոռպերատիվները (և թույլ և ուժեղ): Անհրաժեշտ են նաև փորձառու ընկերոջ ղեկավարությամբ ծանոթանալ, թե ինչպես են դրված աշ-

¹ Կոռպերատիվ խմբակների ծրագրերն ու մանրամասն ցուցմունքներ խմբակների մասին կարելի յեստանալ «Հայկոռպի» կազմադրանից—Յերկան, Շահումյան փողոց № 3:

խատանքը կոռպերատիվների գործունեյության զանազան ձյուղերում: Խըմբակի աշխատանքները ղեկավարելու համար անհրաժեշտ են հրավիրել կոռպերացիայի աշխատավորներին, նաև սուրք նրանց թեկնածությունը հաստատելով Ռ. Կ. Կ. (Ք.) ի բջիջներում:

Ամեն տարի կոռպերացիան պահանջում է նոր տասնյակ հազար աշխատավորներ: Կոռպերատիվ կուրսերը և տեխնիկումներն այդ խնդիրը զլուխ բերել չեն կարող. բացի դրանից, մենք չունենք բավականաչափ փորձված կոռպերատոր մանկավարժներ, վորոնք կկարողանային լրիվ կերպով բավարարել մեր դասընթացքներին ու տեխնիկումներին: Բացի սրանից, տեղերում աշխատողների սակավությունը հնարավորություն չի տալիս, վոր առանձին աշխատավորները թողնեն աշխատանքն ու գնան սովորելու: Բայց յելք պիտի գտնել ԶԵ վոր այդ յելքը գտնելն այնքան ել դժվար չե: դա նախ և առաջ,

ինչպես մենք հիշեցինք, խմբակներ ստեղծելն եւ Բայց դա, իհարկե, քիչ եւ խմբակն ընդգրկում եւ 15.25 հոգի, հաշվելով իր աշխատանքների տեղությունը 5.8 ամիս. Նախապատրաստման այդպիսի դանդաղ տեմպը, իհարկե, կոռպերացիային լրիվ չափով բավարարել չի կարող: Արտասահմանում գործադրում են թղթակցական դասընթացքների, կամ սովորողներին բացակայությամբ ուսուցանելու մեթոդը (զաочное обучение). Մասնավորապես Անգլիայում Սպառողական Ընկերությունների Միության Լուսավորության կենտրոնական Բաժինն այդպիսի դասընթացքներ եւ կազմակերպել Մանչեստրուս: Դասընթացքներն սպասարկում են կոռպերատիվ կազմակերպություններում ծառայող յերիտասարդությանը և դաստուներին: Դասընթացքներն ունեն հատուկ բաժանմունքներ՝ թե՛ վարչության անդամներ և թե՛ պահեստներում և խանութներում աշխատողներ պատ-

րաստելու համար: Դասընթացքներն ավարտելուց հետո մասնակիցները քննություն են տալիս և ստանում վկայականներ: Նույն տիպի դասընթացքներ եկազմակերպում են. Ս. Հ. Մ.-ի համար նաև Յենտրոսայուղի Կոռպերատիվ Լուսավորության Բաժինը: Դասընթացքների նպատակն եւ տալ աշխատավոր լայն մասսաներին սիստեմատիկ զիտելիքներ կոռպերատիվ աշխատանքի զանազան բնագավառների վերաբերյալ: Այդպիսի դասընթացքների առավելությունն այն եւ, վոր ամեն մարդ, առանց իր ամենորյա աշխատանքից կաըրգելու, կարող եւ տանը նստած սովորել: Ուսուցման մեթոդն այն եւ, վոր ինքնուրույն կերպով պիտի մշակել առանձին դասախոսությունների և նյութերի հարցերը, վորոնք այդ նպատակով արամադրվում են սովորողներին: Նման դասընթացքները միանում են մի ընդհանուր խմբակի մեջ, վորը և վորոշում երաբանչյուր սովորողի առաջադի-

մությունը կուրսանտների աշխատանքի պրոցեսում։ Յեթե վիճելի հարցեր և փորձ կուտակվի, այդպիսի գեղում յենթադրվում է հրավիրել հատուկ համագումարներ և խորհրդակցություններ¹։

Բացակայությամբ դասընթացքները հաջողությամբ կարող ե ոգտագործել Կոմյերիսմիությունը վոչ միայն իր կազմակերպության մեջ, այլ և նրանից դուրս՝ ծավալելով ազիտացիա լայն մասսաների մեջ այդ դասընթացքներին մասնակցելու համար։

Ակումբներում պետք ե կիրառելնաև կոռպերատիվ անկյուններ կազմակերպելը, վորտեղ կլինեն դիագրամմաներ տեղական կենտր. բանկոպների և ամբողջ կոռպերացիայի աշխատանքների մասին։ Անկյունը պիտի ունենա բավա-

¹ Մանրամասն տեղեկություններ բացակայությամբ դասընթացքների մասին կարելի յե ստանալ «Հայկոպի» կազմ-բաժնից—Յերեկան, Շահումյան փողոց № 3։

կանաչափ գըականություն, և նրան կից պիտի բանալ կոռպերացիայի հարցերի վերաբերյալ տեղեկատու բյուրո, ունենալով այնտեղ ամեն որ հերթապահներ, վորոնք կարողանան բավարար չափով տեղեկանքներ տալ յեկողներին, որինակ՝ հանձնարարել կարդալու գրքեր, խորհուրդ տալ, թե ինչպես անդամագըրպել կոռպերատիվին, տալ բացարություն գործնական հարցերին կատմամբ, և այլն։ Անկյան անդամների թիվը ՀՀ-պիտի սահմանափակել. անկյունը պիտի լինի մասսայական կազմակերպություն, վոր սպասարկելու յե ակումբի անդամներին և հաճախողներին¹։

Կոռպերատիվ կյանքը և մանավանդ սկզբնական բջիջն ամենից քիչ ե լուսաբանվում մամուլում։ Իսկ կոռպերատիվում թերություններ շատ կան։

¹ Մանրամասն տեղեկություններ կոռպերատիվ անկյունների մասին կարելի յե ստանալ «Հայկոպի» կազմ-բաժնից—Յերեկան, Շահումյան փող. № 3։

Դեռ մինչև որս ել վորոշ տեղերում կոռպերացիայում աշխատում են վատ կոռպերատորներ, կուլակներ, հարբեցողներ, սեփական շահագիտական նկատառություններ ունեցող և շահամոլ մարդիկ: Կոմյերիսմիության բջիջն ամեն կերպ պիտի մերկացնե նման «կոռպերատորներին», հաղորդելով նրանց մասին կոռպերատիվ և գյուղացիական թերթերին:

Կոռպերացիայում լինում են, իհարկե, և նվաճումներ: Լավ կոռպերատորը և վարչության աշխատավորների լավ կազմը կարողանում են լավ անցկացնել բնակչության կոռպերացման կամպանիան, աշխատանքի մեջ ունենում են հաջողություն և հեղինակություն են ձեռք բերում սպառող մասսայի մեջ. կիրառում են հասարակական-կուլտուրական կյանքի կազմակերպումը, ամեն կերպ նպաստում են աշխատանքի վերակառուցմանը. թե այսպիսի կոռպերատիվի և թե այդպիսի կոռ-

պերատորների մասին պիտի գրել լրացրերում, պիտի հրապարակել նրանց փորձը, չպիտի մոռանալ, վոր կենարոնական մարմինները շահագրգոված են կոռպերատիվ ցանցի կյանքի մասին արվող բազմակողմանի տեղեկություններով, վորովհետեւ անկարելի յե ճիշտ կերպով կառուցել աշխատանքը, վերցնել նրա թերություններն ու ղեկավարել գործը, առանց իմանալու նրա կյանքը, հաջողություններն ու թերությունները: Կոմսոմոլի բջիջը պիտի ընտրի կոռպերատիվ հարցերի թղթակից գյուղացիական թերթերի համար¹: Իսկ կոռպերացիայում աշխատող ամեն մի ընկեր պիտի ըմբռնի այդպիսի աշխատանքի նշանակությունը՝ կոռպերատիվ գործունեյությունը հաջողությամբ զարգացնելու համար:

¹ Մեզ մոտ «Մաճկալի», «Ավանուգարդի» և «Հայաստանի կոռպերացիայի» համար

տնտեսավարական աշխատանքով. այդպիսի ընկերները զուտ կուսակցական աշխատանք տանել չեն կարող. կնշանակի այդ գյուղերում Կոմյերիտմիությունը բացառիկ նշանակություն ե ստանում: Այսպիսի գեպքում Կոմյերիտմիության բջիջը հանդիսանում ե գասակարգային գծի հաղորդիչը և հասարակական կյանքի կազմակերպողը գյուղում:

Մենք գիտենք շատ վայրեր, վորտեղ աճում և զարգանում են Կոմյերիտմիության բջիջի կազմակերպած կոոպերատիվները: Իրեն որինակ կարելի յե վերցնել յերկու փաստ—Մասկվայի գավառի Կիևյան կոոպերատիվը և Կալուգայի Նահանգի Պետրիշևո գյուղը: Պետրիշևոյում կոմյերիտականները կուշակային տարրը կոոպերացիայից մեկուսացրին. այնտեղ կոոպերացիան հեղինակություն չեր վայելում գյուղացիության այն մասի մեջ, վորին ամենից շատ եր հարկավոր: Բջիջը կարգի դրեց

III

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ.

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՈՊԵՐԱ-
ՑԻԱՅԻ ՀԵՆԱՐԱՆՆ Ե.

Գյուղում մենք արդեն ունենք կոո-
պերացիայի և բջիջի կապի ձեռք, վոր
գործադրվում են յերկու տարուց ի վեր:
Այդ կապը կիրառվում է ներկայացուց-
չության միջոցով: Գյուղական բջիջը
վաղուց արդեն գործնականորեն մաս-
նակցում է գյուղի կոոպերատիվ շինա-
րարությանը: Ուստի և մենք արդեն
կարող ենք խոսել տվյալ աշխատանքի
վորոշ արդյունքների մասին, իսկ ար-
դյունքներ անկասկած կան և այն ել
շատ մեծ արդյունքներ, Գյուղը հաճախ
չունի կուսակցական բջիջ, իսկ յեթե
ունի յել, ապա չորս-հինգ մարդուց բաղ-
կացած, նրանք ել զբաղված են վարչա-

կոռպերատիվի աշխատանքը, կազմակերպեց խանութ, թեյատուն, իջևան և կոռպերացիայի միջոցներով սարքավորեց խրճիթ-ընթերցարանը: «Կօպերատիվու աշխատանքը համարներից մեկում գյուղացիք շնորհակալություն են հայտնում կոմյերիտականներին նըանց աշխատանքի համար: Մյուս փաստը կիւյան կոռպերատիվը եւ Շնորհիվ կոմյերիտմիության բջիջի աշխատանքի այդ կոռպերատիվի խանութն ու թեյատունը կարճ ժամանակվա ընթացքում ստացել են զուտ արդյունք 2,200 ո.: Այստեղ կարեոր եւ շեշտել մեկ հանգամանք. դա այն է, վոր կոռպերացիայում աշխատող կոմյերիտականներն աշխատանքը ծավալում են միաժամանակ յերկու ֆրոնտի վրա. բացի առևտրից, նրանք, կոռպերատիվի միջոցներն ավելացնելու հետ միասին՝ սկսում են շինել հասարակական թեյատուն, խրճիթ-ընթերցարան և ուրիշ կուլտուրական հիմնարկներ: Այդպիսի սկզբունքներ

մտցնելն անկասկած կոռպերացիայի համար ուղախալի յերեսույթ եւ:

Իհարկե, կան և այնպիսի գյուղեր, վորտեղ կոռպերացիան չունի կոմյերիտական վոչ մի ոժանդակություն. կան և այնպիսիները, վորտեղ կոմյերիտմիության կոռպերատիվ վատ աշխատանքը նույնիսկ վորոշ հյական վասս երերում կոռպերացիային: Մրադեմ պետք եւ կովել: Համենայն գեպս, պիտի ձգտել իսկական կոմյերիտական աշխատանքի, մանավանդ վոր այդպիսի աշխատանքն իրը իր մեջ և' առետրի և' հասարակականության տարրեր պարունակող աշխատանք, մեծ մասամբ ապահովում եւ կոռպերատիվ աշխատանքի կանոնավոր և ճիշտ գարգացումը:

Կոռպերացիայի աշխատավորներն անպայման պետք եւ ուժեղացնեն կոմյերիտմիության միշտ աճող ազդեցությունը գյուղում և դրանից պետք եւ ոդտվեն կոռպերատիվ աշխատանքն ընդարձակելու և խորացնելու համար:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԻՌՅՈՒՆԸ
ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԵԶ ՊԵՏՔ Ե ԳՐԱՎԵԼ.

Գյուղական յերիտասարդությունը
կոռպերացիայի մեջ գրավելու ասպա-
րիզում մենք մեծ դժվարությունների
յենք հանդիպում: Գյուղի յերիտասարդն
ու աղջիկը անտեսապես կախված են
ընտանիքից և սեփական աշխատանք
չունեն, ուստի և փայ և մուտքի վճար
մուծել, բնական ե, չեն կարող: Յեզ
միայն առանձին դեպքերում մենք
բացառությունների յենք հանդիպում,
այն ել միայնակ գյուղացի յերիտա-
սարդների մեջ:

Բայց այդ գրությունից յելք գտնել
կարելի յե. որինակ, ամառն ու աշնանը
յերիտասարդությունը, մանավանդ աղ-
ջիկները հավաքում են սունկ, մորի և
այն, ծախում են վուշ և այլ առարկաներ,
վորոնցով հարուստ ե գյուղը: Այդ բոլորը
շատ հաճախ մասնավոր գնորդների ձեռ-
քըն ե ընկնում: Բջիջը պետք ե հաշվի

առնի այդ մոմենտը և պրոպագանդայի
միջոցով աշխատի, վոր յերիտասարդու-
թյունն այդ մթերքներով մուծի իր
փայակները և այդ առարկաները ծախի
կոռպերացիայի միջոցով:

Յերիտասարդությունը—իբրև աղգա-
բնակության ակտիվ մասսան—կոռ-
պերացիայի մեջ գրավելու վրա հատուկ
ուշադրություն պիտի դարձնել:

Յերիտասարդությունը կոռպերացիայի
մեջ գրավելու հիմնական աշխատանքը
բջիջն իր վրա պիտի վերցնի: Բջիջի
նիստերին մեծ տեղ պիտի տալ կոռպե-
րատիվ հարցերին. այդ հարցերի քննու-
թյան համար պետք ե գրավել ամբողջ
կոմյերիտական մասսան, ինչպես նաև
անկուսակցական յերիտասարդությու-
նը: Կոռպերատիվի վարչության հետ
պայմանավորվելով, տեղական կոռպերա-
տիվի վարչության հաշվետու և նախա-
գծային զեկուցումները, ինչպես և կոմ-
յերիտմիության ներկայացուցչի զեկու-
ցումները պիտի դնել բջիջի նիստերում:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՄԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՌՊԵՐԱԾԻԱՅԻ ՄԵԶ ՊԵՏՔ Ե ԳՐԱՎԵԼ.

Գյուղական յերիտասարդությունը
կոռպերացիայի մեջ գրավելու ասպա-
րիզում մենք մեծ դժվարությունների
յենք հանդիպում։ Գյուղի յերիտասարդն
ու աղջիկը անտեսապես կախված են
ընտանիքից և սեփական աշխատանք
չունեն, ուստի և փայ և մուտքի վճար
մուծել, բնական ե, չեն կարող։ Յեզ
միայն առանձին գեպքերում մենք
բացառությունների յենք հանդիպում,
այն ել միայնակ գյուղացի յերիտա-
սարդների մեջ։

Բայց այդ դրությունից յելք գտնել
կարելի յե. որինակը ամառն ու աշնանը
յերիտասարդությունը, մանավանդ աղ-
ջիկները հավաքում են սունկ, մորի և
այլն, ծախում են վուշ և այլ առարկաներ,
վորոնցով հարուստ ե գյուղը։ Այդ բոլորը
շատ հաճախ մասնավոր գնորդների ձեռ-
քըն ե ընկնում։ Բջիջը պետք ե հաջո՞ւ

առնի այդ մոմենտը և պրոպագանդայի
միջոցով աշխատի, վոր յերիտասարդու-
թյունն այդ մթերքներով մուծի իր
փայավճարը և այդ առարկաները ծախի
կոռպերացիայի միջոցով։

Յերիտասարդությունը՝ իբրև ազգա-
բնակության ակտիվ մասսան՝ կոռ-
պերացիայի մեջ գրավելու վրա հատուկ
ուշադրություն պիտի դարձնել։

Յերիտասարդությունը կոռպերացիայի
մեջ գրավելու հիմնական աշխատանքը
բջիջն իր վրա պիտի վերցնի։ Բջիջի
նիստերին մեծ տեղ պիտի տալ կոռպե-
րատիվ հարցերին. այդ հարցերի քննու-
թյան համար պետք ե գրավել ամբողջ
կոմյերիտական մասսան, ինչպես նաև
անկուսակցական յերիտասարդությու-
նը։ Կոռպերատիվի վարչության հետ
պայմանավորվելով, տեղական կոռպերա-
տիվի վարչության հաշվետու և նախա-
գծային գեկուցումները, ինչպես և կոմ-
յերիտմիության ներկայացուցչի գեկու-
ցումները պիտի դնել բջիջի նիստերում։

Զեկուցումների վերաբերմամբ չպիտի
սահմանափակվել չոր բանաձև ընդու-
նելով։ Անհրաժեշտ է անպայման մատ-
նանշել կոռպերատիվի հերթական խըն-
դիրները, ցույց տալ նրա թերություն-
ները և միջոցներ ցույց տալ այդ թե-
րություններն ուղղելու համար։

Բազմախանութ կոռպերատիվ ունե-
ցող շրջաններում, վորտեղ կան խանու-
թային հանձնաժողովներ, պետք ե աշ-
խատել խանութային հանձնաժողովի մեջ
անցկացնել կոմյերիտականներին. իհար-
կե, այդ նպատակին պիտի հասնել
կոմյերիտականների ակտիվ աշխատան-
քի ճանապարհով։

Բջիջն ամբողջովին գործոն մասնա-
կցություն ե ունենալու խանութային
հանձնաժողովների աշխատանքների
զարգացման մեջ՝ նախապես ծանոթանա-
լով հանձնաժողովների առաջ դրվող խըն-
դիրներին։ Կոմյերիտականը վոչ միայն
ինքը պետք ե մանի կոռպերացիայի
մեջ և յերիտասարդության մեջ կոռպե-

բատիվ աշխատանք կատարի, այլ և նա
ամեն կերպ պետք ե ոգնի հասակա-
վոր աղջաբընակության կոռպերացմանը՝
ոգտագործելով գյուղի հասարակական
ժողովները, վորոնք դառնալու յեն կոռ-
պերատիվ գաղափարների պրոպագան-
դայի վայրեր։ Իհարկե, ամենից առաջ
նման աշխատանքը պիտի սկսել սեփա-
կան ընտանիքից։

Այդ պիտի ասել մանավանդ գյուղա-
տնտեսական և վարկային կոռպերացիայի
մասին, վորոնք իրենց ուշադրության
կենտրոնում դնում են տնտեսություն-
ների կոռպերացման խնդիրը։

Կոռպերացնել չքավոր տնտեսու-
թյունները, կոռպերացիայի մեջ զրավել
բոլոր վոչ կուլակներին, գյուղի բոլոր
ժրածան տնտեսներին դարձնել կոռպե-
րատորներ՝ ահա այս խնդիրն ե զրված
գյուղատնտեսական և վարկային կոռպե-
րացիայի առաջ, և այդ խնդիրի լուծմանը
մեծ չափով նպատելու յե կոմյերիտ-
միությունը։

Առաջին հերթին կոմյերիտմիության
բջիջի միջոցով գեպի կոռպերացիան
պիտի զրավել կոմյերիտականների
ընտանիքներին։ Ներկայումս գյուղում
մենք նկատում ենք գյուղացիության,
մանավանդ նրա չքավոր մասի կողմից
ձգտում միանալու կոմմունաների, կոլ-
լեկտիվ անտեսությունների և կոլլեկտիվ
հողոգտագործման այլ ձևերի մեջ։

Այդ ձգտման պատճառը մենք գտնում
ենք այն թեքման միջ, վոր մենքը ընդ-
հանրապես նկատում ենք գյուղում։
Գյուղացիության քաղաքական և կուլ-
տուրական ձգտումն աճում է. գյուղա-
ցին այժմս իր ուշընում միտքը դարձնում
ե հատկապես իր տնտեսության բար-
ձրացման վրա։ Այստեղ բջիջն իր ուշա-
դրությունը լարելու յե, ամեն որ մաս-
նակցելով գյուղատնտեսական կոռպե-
րացիայի աշխատանքին, ակտիվ կեր-
պով աջակցելու յե գյուղացիությանը
նրա տնտեսության բարձրացման գոր-
ծում։

Գյուղում լինում ենակ պանրի գոր-
ծարան, յուղարան, վոր հաճախ գտըն-
վում ե մամնավոր անձանց ձեռքին։
բայց չե՛ վոր դա կոռպերացիայի գործն ե։
Այստեղ ել կոմյերիտմիության գործն
առանձնապես նշանակալից ե դառնում։
Յերիտասարդությունն իր ընտանիքում
մեծ դեր ե խաղում, նա կարող ե ընտա-
նիքի մեծին—վորը դեռևս չի գիտա-
կցել իրերի իսկական դրությունը և չի
ըմբռնում այն ստրկական դրությունը,
վորի մեջ նա ընկնում է՝ ծախելով կաթը
մասնավոր առեսրականին—ուղարկել
կոռպերատիվ միություն։

Բջիջի ակտիվությունն այստեղ կա-
րող ե արտահայտվել զանազան ուղ-
ղությամբ։ Մի կողմից՝ զրավել յերի-
տասարդությունը ոժանդակ ձեռնար-
կությունների մեջ (դարբնոց, ջրաղաց,
փականագործության արհեստանոց և
այլն) վորպես աշակերտի, մյուս կող-
մից՝ ոգնել յերիտասարդ ինքնուրույն
տնտեսներին՝ անցնելու հողոգտագործ-

ման կոլլեկտիվ ձևերի (պայմանավորվելով շրջնողհանձնաժողովների հետ՝ նրանց հողամասեր հատկացնելու, նրանց կայքը տեղափոխելու, նրանց գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելու մասին), Ընտանիքից բաժանվող յերիտասարդությանը ոգնելու հարցն առանձին պիտի դնել։ Այս հանգամանքը, գժբախտաբար, շատ քիչ ե հաշվի առնվում։

Ավելի ուժեղ միություններում կազմակերպչական և տնտեսավարական աշխատանքի համար պիտի գործադրել պրակտիկանտության մեթոդը՝ աշխատավորներ նախապատրաստելու նպատակով։ Նմանապես ավելի ակտիվ ընկերների միջոցով պետք ե ոգնել գյուղատնտեսական կոոպերացիայի ապարատները կազմակերպելու գործին։

Գյուղական բջիջներում կան գյուղատնտեսական խմբակներ։ Այդ խըմբակների աշխատանքը շատ հաճախ չէ համապատասխանում իր խնդիրներին,

իսկ մեծ մասամբ նրանք բոլորովին չեն աշխատում, չնայած վոր գյուղատնտեսական խմբակներին կոմյերիտմիության կոմիտեները լուրջ նշանակություն են տալիս, գնահատելով նրանց իրեւ մասսայական կազմակերպություններ, վորոնց նպատակն ե գյուղացիության մեջ գյուղատնտեսական գիտելիքներ տարածելը։ Գյուղատնտեսական կոոպերացիան առանձնապես շահագրգուված ե այդ խմբակների գորյությամբ և նրանց աշխատանքով, քանի վոր, վերջին հաշվով, այդ խմբակների աշխատանքները կապված են գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեյության հետ։

Կոոպերացիայից վոչ պակաս չափով խմբակների աշխատանքով շահագրգուված պիտի լինեն և տեղական բջիջները, վորոնք ոգտագործելու յին ամեն մի պտուտակը, վոր կարող ե խըմբակների աշխատանքի համար ոգտակար լինել։

Գյուղատնտեսական ավելի վորակյալ
աշխատավորներ նախապատրաստելու
առավել բարձր աստիճանը հանդիսա-
նում ե գյուղացիական յերիտասար-
դության դպրոցը։ Կոմյերիտմիությու-
նը պիտի աշխատի, վոր գյուղատնտե-
սական կոռպերացիան ակտիվ մասնա-
կցություն ունենա այդ դպրոցի աշ-
խատանքներում։ Գյուղատնտեսական
կոռպերացիան պետք ե՝ ա) իր ներ-
կայացուցիչը տա գյուղացիական յե-
րիտասարդության դպրոցի կենտրոնա-
կան, նահանգական կամ գավառական
հանձնաժողովներին, բ) շահագրգուված
մարմինների հետ միասին (Կոմյերիտ-
միության, լուսբաժնի) պետք ե վո-
րոշի, թե տվյալ շրջանին կոռպերա-
տորների վեր տիպն ե հարկավոր, և դրան
համապատասխան ել պետք ե համա-
ձայնեցնի գյուղացիական յերիտասար-
դության դպրոցի ծրագիրը, գ) դպրո-
ցի և կոռպերատիվի միջև կնքված պայ-
մանագրի սկզբունքներով պետք ե ա-

պահովի գյուղատնտեսական կոռպերա-
ցիայի ագրոհիմնարկների և տնտեսա-
վարական ձեռնարկությունների ոգտա-
գործումը՝ գյուղացիական յերիտասար-
դության դպրոցի աշակերտների արտա-
գոական պրակտիկայի համար, դ) պետք
ե մասնակցի դպրոցի շենքի վերանո-
րոգման, տարացնելու, սարքավորման և
հանրակացազանի կազմակերպման նպա-
տակով ցույց տրվելիք ոգնությանը և
այլն։

Գյուղատնտեսական կոռպերացիան
պիտի պահանջի, վոր գյուղացիական
յերիտասարդության դպրոցում իրեն
վորոշ քանակությամբ տեղեր հատկաց-
վեն և, կոմյերիտմիության հետ համա-
ձայնության գալով, պետք ե ուղարկի
այնտեղ ամենալավ թեկնածուներին։

Կոմյերիտմիության բջիջները վաչ
միայն պիտի ոժանդակեն աշխատասեր,
ժրաշան գյուղացիությանը, այլև իրենց
վրա պիտի վերցնեն գյուղատնտեսա-
կան կոռպերատիվներ, արտելներ կազ-

մակերպելու նախաձեռնությունն այնտեղ, վորտեղ այդպիսիների կարիքը կա: Բջիջը պետք ե նախաձեռնություն ցույց տա կոլեկտիվների և առանձին գյուղերի համար պարաբռացման նյութեր ձեռք բերելու, ճահճները չորացնելու, ձորակը ամրացնելու, քամուն տվող (երթոց) և ցանող մեքենաներ գնելու գործերում: Իհարկե, այս բոլորը պիտի կազմակերպել աշխատանքը համաձայնեցնելով բարձր կոռպերատիվ կազմակերպությունների հետ, ապահովելով նրանց ոժանդակությունը ամեն կողմից. կոռպերացված մասսայի նյութական բարեկեցությունն ամրացնելու աշխատանքն ավելի հաջող տանելու համար մասսաներում պիտի ամրացնել գյուղատնտեսական կոռպերացիայի հեղինակությունը:

Վարկային կոռպերացիան ներկայումս գեռես բավականաչափ զարգացած չե, բայց նրա նշանակությունն ապագայում, անկասկած, շատ մեծ ե

լինելու: Վարկային կոռպերացիան կոչված ե ամբացնելու ժողովրդական տնտեսությունը և առաջին հերթին սպասարկելու վարձի կարիք զգացող գյուղացիական մասսաներին: Կուլակը լավ ե հասկացել վարկային կոռպերացիայի նշանակությունը և սողալ գեալի վարկային կոռպերացիան: յերբեմն նա կարճ ժամանակով վերցնում ե մի խոշոր գումար և կատարում ե առ և տրական գործառնություններ, ստամում և մեծ շահ և գառնում գյուղի շահագործողը: Կամ յերբեմն ել լինում են այսպիսի յերեսույթներ. սովորաբար վարկային կոռպերատիվը գյուղական շուկայից այնքան ել հեռու չի տեղափորված. սպեկուլյանտը, վոր ձեռք ե բերում չքավորության վկայական, պարտքով փող ե վերցնում վարկային կոռպերատիվից, գնում ե շուկա և այնտեղ առևտորական գործառնություններ կատարելով՝ յերկու-յերեք ժամից հետո փողը յետ ե վերադարձնում:

Գյուղի չքավորն այնքան ել ժիր,
ճարպիկ մարդ չե, և դա հասկանալի յե.
չքավորը միշտ կարիքի և վշտի մեջ ե,
յերբեք ձեռքում խոշոր գումար չի ու-
նեցել և ձի կամ կով գնելու համար
պարտք առնել չի համարձակվում, վո-
րովհետև ապագայում վերադարձնելու
հեռանկար չի տեսնում։ Այսպիսով,
գործը լավ հիմքերի վրա չդնելիս, վար-
կային կոռպերացիան կարող ե գյուղի
կուլակության սեփականությունը դառ-
նալ։ Պետք ե խստորեն հաշվի՝ առնել
այս մոմենտը, պետք ե չքավոր գյու-
ղացիությանը բացատրել վարկային կո-
ռոպերացիայի տված արտօնությունները
և մաս-մաս վճարելու իրավունքը, մա-
սավանդ պետք ե նպատակ դնել—
թույլ չտալ կուլակին հարստանալու
վարկային կոռպերացիայի միջոցների
հաշվին։ Այդ միջոցները հատկացվում
են թույլ տնտեսությունները բարձրա-
ցնելու համար։ Այդ պատճառով ել
պետությունն այդքան խոշոր գումար-

ներ ե հատկացնում գյուղատնտեսա-
կան վարկի համար։

Վարկային կոռպերացիան իր համար
նպատակ պիտի դնի առաջին հերթին
կոմմունալներին և արտելներին ոգ-
նելը. արտելներին և կոմմունալներին
ամեն կերպ սկզբնական շրջանում պետք
ե աջակցի, հնարավորություն պիտի տա
իրենց տնտեսություններն ամրացնելու
գործում։

Պարզ ե, վոր կոմյերիտմիության
խնդիրներն ել ավելի յեն մեծանում
վարկային և գյուղատնտեսական կո-
ռոպերացիայի ասպարիզում։ Յեթե
Խ. Ա. Հ. Մ.-ի կենտրոնական կոռպերա-
ցիայի հարցին առաջին տեղն եր տա-
լիս, ապա, դրան համապատասխան
կերպով, կոմյերիտմիության հետաքը-
քը ու ակտիվությունն ել գյուղատնտեսական և վարկային կո-
ռոպերացիայի նկատմամբ պետք ե բար-
ձրանան։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԶԻՋԻ ԿՈՌՊԵՐԱՏԻՎ
ԱԳԻՏԱՇԽԱՏԱՆՔԸ.

Գյուղական կյանքում կոռպերատիվ գաղափարների տարածման հիմնական տեղը լինելու յե խրճիթ-ընթերցարանն իբրև գյուղացիության և գյուղացիական յերիտասարդության մասսայական հավաքման ամենից ավելի կարևոր կենտրոն։ Շատ հաճախ այդ կենտրոնն անկազմակերպ ե լինում և չի ծառայում իբրև իսկապես խելացի ժամանցի և կոմմունիստական գաղափարների պրոպագանդայի վայր, բայց դա արդեն կտխված ե ընթերցարանի ղեկավարներից, այս կամ այն չափով նաև կոմյերիտմիության բջիջից։

Գյուղական խրճիթ-ընթերցարանի աշխատանքի գլխավոր տեսակներն են։ — ծանոթացնել գյուղացիությունը մեզ շրջապատող պայմանների հետ (միշտ զգային դրության), զրքի և զըռլյացի միջոցով բացատրել գյուղացուն խոր-

հըրդային իշխանության քաղաքականությունը գյուղում՝ հողային և գյուղացիությունը հետաքրքրող այլ հարցերի նկատմամբ, տարածել գյուղացիական մասսայում կոռպերատիվ գաղափարներ։ Ահա այս յերեք տեսակ աշխատանքով պիտի կառուցվի խրճիթ-ընթերցարանի գործը։ Իհարկե, նրա խնդիրները սրանցով չեն սահմանափակվում, կան և ուրիշ շատ խնդիրներ, բայց հիմնականներն այդ ցույց տվածներն են։

Կոռպերացիան ներկայումս ամենից քիչ ե արտացոլում խրճիթ-ընթերցարանի ընդհանուր աշխատանքի մեջ. բայց չե վոր մենք արդեն պարզեցինք, վոր այժմս առաջին տեղն այդ աշխատանքն ե բռնում, վոր կոռպերատիվի անդամների ինքնազործունեյությունից ե կախված կոռպերացիայի աշխատանքի ընդհանուր հաջողությունը։ Դժբախտաբար խրճիթ-ընթերցարանում շատ քիչ կարելի յե լսել վոչ միայն կոռպե-

ըացիայի ընդհանուր աշխատանքի մասին ընդհանրապես, այլ և տեղական կոռպերատիվի աշխատանքի մասին. սրա հետևանքով շատ գյուղացիներ ունեն կոռպերատիվի գրքույկներ, բայց շատ թույլ են կապված իրենց կոռպերատիվի հետ, չիմանալով, թե վորն ե կոռպերացիայի աշխատանքի եյությունը:

Սրանից ե բղխում անդամների թույլ ակտիվությունը և կոռպերատիվի մասին, իբրև խանութի մասին, ունեցած իրենց կարծիքը:

Յեթե չկա մասսայի ակտիվություն—կնշանակի կանգ ե առնում և կոռպերատիվի վարչության աշխատանքը, առաջ ե գալիս՝ լավագույն դեպքում անգործունեյություն, իսկ վատագույն դեպքում՝ վոճրագործություն և նույնական սպեկուլյացիա: Վորպեսզի այդ տեղի չունենա, պետք ե գյուղացիներին բացարել կոռպերացիայի խնդիրները, պիտի խոսել կոռպերացիայի աշխա-

տանքի մասին, պիտի վարժեցնել կոռպերատիվ հարցերը հասկանալուն, պետք ե ստիպել վոր կոռպերացիայի մեջ ակտիվություն ցույց տա նա—միայն այդ ժամանակ մենք կունենանք աշխատունակ կոռպերատիվ և պիտանի աշխատավորների կադր:

Ի՞նչպես հասնել այդպիսի դրության: Այստեղ կարելի յե կիրառել խրճիթնթերցարանին կից կոռպերատիվ խըմբակ, վորը բաղկացած պիտի լինի յերիտասարդությունից և հասակավորներից: Խմբակ կազմակերպելունախաձեռնությունը նշանակալից չափով պատկանելու յե կոմյերիտմիության բջիջն: Ինարկե, այդ աշխատանքը պիտի կատարել կուսբջիջի, կոռպերացիայի և շրջանային քաղլուսկենտրոնի հետ միասին: Այդ աշխատանքի համար խմբակի մեջ անհրաժեշտ ե գրավել, իբրև ղեկավարների, կոռպերատիվի աշխատավորներին: Այդ աշխատանքի համար պիտի գրավել և գյուղական ուսուցչին, վորը սովորաբար շատ շուտով հետաքրքրվում ե կոռ-

պերատիվ աշխատանքով։ Բայց խմբակ
կազմակերպելու աշխատանքի նախա-
ձեռնությունն իր վրա պիտի վերցնի
կոմյերիտ։ Քջիջը։

Յերբ վոր Կոմյերիտմիության բջիջը
կազմակերպի այդ բոլոր ուժերը, այն
ժամանակ կոոպերատիվ խմբակը հեշ-
տությամբ յեղեան կհանի գյուղացիա-
կան ակտիվին։ Խրճիթ-ընթերցարանում
կարելի յե կազմակերպել նաև կոոպե-
րացիայի անկյուն, զարդարելով այն
կոոպերատիվ կազմակերպությունների
աշխատանքի վերաբերյալ գիտարարնե-
րով։ Անհրաժեշտ ե պարբերաբար դնել
գործնական գեկուցումներ, թե կուզ հենց
իրենց կոոպերատիվի աշխատանքների
մասին Սովորաբար բավականաչափ մի-
ջոցներ ունեցող ամեն մի կոոպերատիվ
բաց ե անում թեյարան, ուր շրջործ-
կոմ և այլ խորհրդային հիմնարկները
յեկած գյուղացիները միքանի ժամ
նստում են և պարապությունից կամ
սկսում են ննջել և կամ յերբեմն ել

հայնոյել։ Վորպեսզի այդպիսի բան տեղի
չունենա, բջիջն ու կոոպերատիվը թեյա-
րանն ողագործելու յեն հոգուտ կոո-
պերացիայի շահերի։ Պետք ե թեյա-
րանին մատակարարել թարմ լրագրեր,
հանդեսներ և կոոպերատիվ գրականու-
թյուն։ Այդ թեյարանների համար պիտի
նշանակել ամենորյա հերթապահներ,
հանձնարարելով նրանց՝ տալ գյուղա-
ցիներին ամեն տեսակ հարցումներին
պատասխաններ և տեղեկանքներ։ Ինց
այսուեղ ել կարելի յե տարածել կոո-
պերատիվ գրականություն։ Լավ կինի,
յեթե այդ թեյարաններում լինեն նաև
թղթակիցներ, վորոնք այնտեղ թերթի
համար բավականաչափ նյութ կարող
են ստանալ։

Պետք ե խմբակում և անկյունում
հաշվի առնել գյուղի բոլոր մանր կեն-
ցաղային կողմերը, վորոնք գյուղացուն
կապում են կոոպերացիայի հետ, և ցայ-
տուն կերպով պետք ե արտահայտել
այդ կողմերը, վորպեսզի ամեն մի

գյուղացու համար նըանք հասկանալի
լինեն:

Ամբողջ ազգաբնակչությունը կոռպե-
րացնելը հեշտ բան չե, մի կամ յեր-
կու տարում այդ բանն անել չի կարե-
լի. հարկավոր ե մանրակրկիտ և համառ
աշխատանքի ամբողջ ժամանակաշրջան,
բայց այդ դժվարությունից չպետք ե
վախենալ, այլ պետք ե առաջ դնալ,
դիմելով գեղի նվիրական նպատակը:

Կոմյերիտմիության կոռպերատիվ
աշխատանքում եյական գեր ե խաղալու
փորձառության փոխանակությունը:
Մի գյուղի աշխատանքի թերություն-
ները, մյուսի հաջողությունները—այդ
բոլորը պետք ե հաշվի առնեն Կոմյե-
րիտմիության կոմիտեներն ու կոռպե-
րատիվ միությունները: Յեվ այդ բո-
լորը հաշվի առնելով՝ պետք ե վորոշ
յեզրակացություններ հանել Կոմյերիտ-
միության կոռպերացիայում կատարած
աշխատանքի թե մեթոդների և թե
ձևերի մասին:

Միայն մի բան չպիտի մոռանալ, այն՝
վոր թե կոռպերացիան և թե Կոմյե-
րիտմիությունը փոխադարձաբար մի-
մանց կարիքն են զգում, և վոր կոռ-
պերացիայում Կոմյերիտմիության
աշխատանքը միայն այն ժամանակ
դրական հետեւանքներ կտա, յերբ այդ
աշխատանքը կլինի խորը և որգանական:




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցերես

I.	ԿՈՂՊԵՐԱԾԻԱՅԻ ԽՆԴԻԲՆԵՐՆ ՈՒ ԿՈՄՅԵՐԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
II.	ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆ- ՔՔ ԿՈՂՊԵՐԱԾԻԱՅԻԱՅՈՒՄ	22
	Կոմյերիտմիության ներկայացուց- չությունը կոռպերացիայի մեջ	22
	Յերիտասարդությունը և Կոմյերիտ- միության անդամներին կոռպե- րացիայի մեջ գրավելը	32
	Յերիտասարդության ակտիվության բարձրացումը և նրան կոռպերա- ցիայի ապահովագործությունը	37
	Կոռպերացիայի աշխատավորներ նա- խապատրաստելու մեթոդները	47
	Ագիտացիայի և պրոպագանդայի ձևերը քաղաքում	51
III.	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ	64
	Կոմյերիտմիությունը կոռպերացիայի հենարանն ե	64
	Գյուղական յերիտասարդությունը կոռպերացիայի մեջ պետք ե գրավել	68
	Գյուղական բջիջի կոռպերատիվ աշխատանքը	82

ՀՀ Ազգային գրադարան



NL0187339



ԳԻՆԸ 25 ԿՈԴ.